ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ
ԴԱՍԸՆԹԱՑ **2022**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ ՈՒսուցչի դերը սովորողի մասնագիտական կողմնորոշման գործընթացում

Կատարող՝ Թագուհի Օհանյան

Առարկա՝ Մաթեմատիկա

Ուսումնական հաստատություն ՝ Հրազդանի Հովսեփ Օրբելու անվան թիվ **13** ավագ դպրոց

ՀՐԱԶԴԱՆ **2022**

Բովանդակություն

Ներածություն_____**3**

Մասնագիտական հասկացություններ _____ 4
Մասնագիտության ճիշտ ընտրություն _____ 6

Անձի ինքնագնահատումը _____ 7

Մասնագիտության ընտրության կարևորությունը _____ 8

Թեստեր _____ 11

Ուսուցչի դերը դպրոցականների մասնագիտական կողմնորոշումում _____ 17

Եզրակացություն _____ 20

Գրականություն _____ 21

Ներածություն

Սովորողի մասնագիտական կողմնորոշման գործընթացում կարևոր դեր են խաղում մասնագիտության մեջ ինքնորոշումը: Այստեղ հարկավոր է կարևորել ուսուցչի դերը սովորողի ինքնուրույն կողմնորոշվելու կարողունակություն ձևավորելու գործում: Ապագա

մասնագետի համար կարևոր դեր են խաղում սովորողին ճիշտ կողմնորշելը, աշխատաշուկայի պահանջարկի համապատասխանեցումը և հայրենիքի բարգավաճման և զարգացման տանող մասնագիտություններով մասնագիտանալը: ՈՒսուցչի դերը մասնագիտական կողմնորոշման գործում պետք է լինի՝

սովորողի կյանքում մասնագիտություն ընտրելու անհրաժեշտության հիմնավորումն ու նրա կարևորության,նշանակության գիտակցության ձևավորումը: Մասնագիտություն ընտրելիս կարևոր է հիշել, որ այն ողջ կյանքի ընթացքում մարդու հետ է լինելու և ազդելու ինքնաստեղծման գործընթացի վրա: Այստեղ տեղին է նշել գերմանացի փիլիսոփա Ֆ.Նիցշեյի խոսքերը <<Դարձիր այն, ինչ կաս>>; Սովորողը պետք է հասկանա ով է ինքը, ինչ անձնային հատկանիշներ ունի, որոնք են իր ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունները: Որքան անձը լավ է ճանաչում իրեն, իր բնավորությանուժեղ և թույլ կողմերը, կարողանում է հստակ ներկայացնել իրեն և դիմացինին, պլանավորում իր գործողությունները, ծրագրում իր հետագա քայլերը,այնքան մեծ է ,կայուն և ամուր հասարակություն ունենալու հնարավորությունները:

Նպատակը

● Սովորողին բացատրել և հիմնավորել,որ կյանքում մասնագիտություն ընտրելը անհրաժեշտություն է

● Սովորողի մոտ բացահայտել անձնային որակների համադրումը կոնկրետ մասնագիտությունների մեջ

● Սովորողներին տեղեկացնել իրենց նախընտրած մասնագիտությունը ստանալու հնարավորություններն ու ճանապարհները

● Սովորողներին բացատրել և հիմնավորել կյանքում ճիշտ որոշում կայացնել մասնագիտություն ընտրելիս

● Սովորողներին ծանոթացնել մասնագիտությունների տեսակներին

● Սովորողներին բացատրել մասնագիտության և զբաղմունքի .

տարբերությունը

Մասնագիտական հասկացություններ

Մասնագիտական կողմնորոշման համար անհրաժեշտ են մանկավարժության և հոգեբանության շրջանակներից դուրս առավել ընդգրկուն համալիր աշխատանքներ ` ուղղված մասնագիտության ընտրությանը: Պլատոնը գրել է.<<Ամեն անհատ պետք է զբաղվի այնպիսի բանով, ինչը պետք է պետությանը, և միևնույն ժամանակ՝ նրանով, ինչին նա իր ամբողջ էությամբ ամենաշատն է համապատասխանում>>:

Այսպիսով՝ մոտ 2.5 հազարամյակ առաջ Պլատոնը նախանշել է այն, որ աշխատանքի և հասարակության զարգացման գործում անխուսափելի է անհատի գործունեության դերերի տարանջատումը:

Հիմնական հասկացությունների սահմանումներ

Մասնագիտական կողմնորոշումը գործառույթ է, որի նպատակն է անձին տրամադրել համակարգված տեղեկատվություն աշխատաշուկայի առկա իրավիճակի և զարգացման միտումների, կրթական համակարգի ընձեռած հնարավորությունների, մասնագիտությունների, անձնային որակների և հակումների վերաբերյալ՝վերջինիս հնարավորություն ընձեռելով կայացնել գիտակցված և արդյունավետ որոշում: Կարիերան կյանքի ընթացքում մարդու ստանձնած աշխատանքային դերերի հաջողությունն ու բազմազանությունն է: Առավել լայն իմաստով՝այն ընդգրկում `է կյանքի դերերը, ժամանցը, ուսումնառությունը և աշխատանքը: Կարիերայի ուղղորդումը համակարգված գործառույթ է, որի նպատակն է անձին օգնել շարունակական ինքնազարգացման և ինքնակատարելագործման միջոցով բարձրացնել մրցունակությունը աշխատաշուկայում և ունենալ համակարգված շարունակական առաջընթաց ողջ աշխատանքային գործունեության ընթացքում: Մասնագիտական ինքնորոշման էությունը ընտրված մասնագիտության, զբաղմունքի,աշխատանքի շրջանակներում անձնական հետաքրքրություն և իմաստ փնտրելն ու գտնելն է:

Մասնագիտական ինքնագիտակցությունը մարդու ինքնագիտակցության դրսևորումն է, որի համար աշխատանքային գործունեության միջոց է՝ որպես կայացած անձ սեփական արժանապատվությունը հաստատելու համար: Մասնագիտությունը (լատիներեն նշանակում `հայտարարում եմ իմ գործը) մարդու աշխատանքային գործունեության տեսակ է,որը պահանջում է որոշակի պատրաստվածություն,և մարդու գոյատևման աղբյուրն է: Մասնագիտությունները տաանջատվում են՝ ըստ կատարվող աշխատանքների բնույթի և պարունակության,ինչպես նաև՝աշխատանքային գործիքների կիրառման:Մասնագիտացումը լատիներեն նշանակում է հատուկ,յուրահատուկ, հատուկ պատրաստվածության և աշխատանքային փորձի վրա հիմնված գիտելիքների,կարողությունների և հմտությունների համակարգ է,որն անհրաժեշտ է գործունեության կոնկրետ տեսակի համար այս կամ այն մասնագիտության շրջանակներում: Զբաղմունքն աշխատանք է ,որով անձը զբաղվում է տվյալ պահին, և որը նրա համար եկամտի հիմնական աղբյուրն է: Ի դեպ զբաղմունքը կարող է համընկնել մասնագիտության հետ:

Մասնագիտության ճիշտ ընտրություն

Մասնագիտության ճիշտ ընտրությունը (իր բնական և ձեռքբերովի որակներին համապատասխան) ազդում է մարդու ճակատագրի վրա: Եթե աշխատանքը մարդու համար այն չէ, ինչ մենք անվանում ենք «երկրորդ տուն», ապա սա դժբախտություն է մարդու համար: Շատ կարևոր է ապագա մասնագիտության համար ինքնորոշումը սեփական անձի հնարավորությունների ևկարողությունների գիտակցման եղանակով: Այդ նպատակով հարկավոր է աջակցություն ուսուցչի կողմից սովորողին տրամադրելով մեծածավալ տեղեկություն՝ինքնաճանաչման և ինքնագիտակցման միջոցով: Մասնագիտական կողմնորոշումը կարելի է կազմակերպել վաղ տարիքում խաղերի՝մասնագիտական դերերի ներկայացման միջոցով,որը ավելի ուշ տարիքում կարող է նախահիմք ծառայել արժեհամակարգի ձևավորման ժամանակ: Արդեն պատանեկան տարիքում դրանք նախահիմք են դառնում արժեհամակարգի համար: Ապագա մասնագետը կայացնում է իր որոշումը, ընտրում է մասնագիտությունն ու ծավալում սկզբում ուսումնական, այնուհետև

մասնագիտական գործունեությունը: Շատ կարևորոր է հոգեբանական աջակցումն ու խթանումը ավելի վաղ՝ դեռահասության տարիքում, ինչը հնարավոր է իրականացնել համապատասխան տեղեկատվության լայնածավալ կիրառմամբ և դեռահասների շրջանում հոգեբանական ինքնաճանաչման, ինքնագիտակցման ձևավորման և զարգացման ճանապարհով: Ուսուցիչը դպրոցում հասարակության ներկայացուցիչն է: Եվ եթե նա խուսափում է երեխաների՝ որպես ապագա մասնագիտական աշխատանքի սուբյեկտների զարգացումը ուղղորդելուց և այս կարևոր գործընթացը թողնում է պատահականության, ապա դա նշանակում է, որ ուսուցիչը խուսափում է հասարակության առաջ մասնագիտական պատասխանատվությունից: Ուսուցչի տրամադրության տակ են ոչ միայն դասավանդման մեթոդները, ուսումնական գործընթացի կազմակերպումը: Այն պետք է օգնի սովորողներին հասկանալ, թե որոնք են իրենց անհատական հատկանիշների առավելությունները և որոնք են թերությունները: Դա հնարավորություն կտա ուղղորդել հենց դպրոցականների ջանքերը, մի կողմից՝ համախմբել այդ գործունեության դրական դրսևորումները, մյուս կողմից՝ հաղթահարել կամ փոխհատուցել անցանկալիները: Սա կզարգացնի ուսումնական գործունեության անհատական ոճը: Եթե մարդն իրազեկ է իր դինամիկ հատկանիշներին, ապա գործունեության անհատական ոճի որոնումը կգնա ճիշտ ուղղությամբ և կդառնա ավելի ակտիվ, նպատակասլաց: Հետևաբար, այնքան կարևոր է որքան հնարավոր է շուտ, արդեն դպրոցում, տեղեկություն ունենալ այն մասին, թե արդյոք աշակերտները ճիշտ են գնահատում իրենց դինամիկ առանձնահատկությունները, այսինքն՝ դինամիկ ներուժը: Դա հնարավորություն կտա շտկել ինքնագնահատականը, ձևավորել իրենց մասին ճիշտ պատկերացում դպրոցականների շրջանում և փրկել նրանց ներքին անհարկի կոնֆլիկտներից:

ԱՆՁԻ ԻՆՔՆԱԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Մասնագիտություն ընտրելիս շատ կարևոր է մարդու ինքնագնահատումը: Ինքնագնահատումը ճանապարհ է դեպի ինքնաճանաչում:Այն բազակի ինքնավերլուծության հնարավորություն է ընձեռումև նպաստում անձի զարգացմանը: Ինքնագնահատումը

գործընթաց է, որը սկսվում է վաղ մանկությունից և շարունակվում այնքան ժամանակ,մինչ անձն իրեն բավարարված զգա,երբ նրան չի անհանգստացնի հասարակական կարծիքը,երբ սեփական աչքերում իրեն բազմակողմանիորեն լիարժեք կհամարի,կարիք չի ունենա ինքն իրեն գնահատելու:

Մանկության շրջանում ինքնագնահատականը մեծապես կախված է շրջապատի,հատկապես ծնողների և այլ նշանակալի մարդկանց գնահատականներից: Այդ միտումը հետագայում պահպանվում է, չնայած անձն աստիճանաբար ավելի անկախ ինքնագնահատական է ձեռք բերում,դրա ձևավորման վրա շարունակում են ազդեցություն ունենալ իր հհասարակության համար նշանակալի մարդկանց կարծիքները:

Տարիքի աճին զուգընթաց ինքնագնահատականը դառնում է առավել տարբերակված: Անհատը կյանքի տարբեր իրադրություններում իրեն գնահատում է անկախ մյուս իրավիճակներում կրած հաջողություններից:

Որքան անձը լավ է ճանաչում ինքն իրեն և դիմացինին կարողանում է պլանավորել իր գործողությունները, ծրագրում իր հետագա քայլերը, այնքան մեծ էկայուն և ամուր հասարակություն ունենալու հնարավորությունը:Անձը, որպես սոցիալական հարաբերությունների սուբեկտ,ունի ինքնավարություն, հասարակությունից որոշակի չափով անկախություն: Անձի անկախությունը ենթադրում է ինքնագիտակցության , ինքնավերլուծուրյան, ինքնագնահատման, ինքնավերահսկման ընդունակության առկայություն: Անձի ինքնագիտակցությունը որոշում է կենսական դիրքորոշումը, վարքագծի սկզբունքները, որոնք հիմնված են աշխատանքային կողմնորոշումների, սոցիալական արժեքների,գաղափարների և բարոյական նորմերի վրա: Մարդու հաջողությունն ու բավարարվծությունը կախված է իր անձի նկատմամբ ունեցած վերաբերմունքից՝ պայմանավորված արտաքին գործոններով:

Մասնագիտության ընտրության կարևորությունը

Մասնագիտության ընտրության նպատակն է հիմնավորել մասնագիտության գիտակցված ընտրության կարևորությունը՝ աշակերտներին տրամադրելով հետագա աշխատանքին: Այստեղ անտրադարձ է կատարվում մասնագիտության և աշխատանքի դերին, մասնագիտության ընտրության գործոններին, և ներկայացվում է կարիերայի ծրագրման պայմանական սխեման:

Ինչու ընտրել մասնագիտություն

Նպատակը

Դասի արդյունքում մասնակիցները

● կհիմնավորեն մասնագիտության ընտրության անհրաժեշտությունը,

● կբացատրեն մասնագիտության ընտրության կարևորությունն ունշանակությունը:

Տևողությունը՝60 րոպե:

Անհրաժեշտ նյութեր՝ երկու տարբեր գույնի թղթեր՝մասնակիցների թվով:

Բանավեճ՝ 45 րոպե:

Մասնագիտության ընտրության կարևորությունը բացահայտելու նպատակով կարելի է օգտվել բանավեճի ձևաչափից:

Աշակերտներին բաժանել 2 հավասար խմբի՝օգտագործելով երկու տարբեր գույնի թղթեր և յուրաքանչյուր աշակերտի տալով մեկ գույն: Թիմերին խմբերի բաժանելուց հետո հայտարարել բանավեճի թեման՝<<Պետք է արդյոք ընտրել մասնագիտություն , թե ոչ>>: Վիճակ գցելու միջոցով որոշել <<Կողմ>> և<<Դեմ>> թիմերին: Նախքան բանավեճի մեկնարկը անպայման պետք է ներկայացնել կանոնները:

Բանավեճի կանոնները

●Յուրաքանչյուր թիմ նախապատրաստվելու համար ունի 15 րոպե ժամանակ:

● <<Կողմ >>թիմը ներկայացնում է պատասխաններ<<Ինչու է պետք մասնագիտություն ընտրել>> հարցին,իսկ <<Դեմ>> թիմը՝<<Ինչու պետք չէ մասնագիտություն ընտրել>> հարցին:

● Առաջինը ելույթ է ունենում <<Կողմ>>թիմը, այնուհետև <<Դեմ>> թիմը: Ելույթի համար յուրաքանչյուր թիմն ունի 5 րոպե: Ելույթներից հետո յուրաքանյուր թիմին տրվում `5 րոպե՝մրցակից թիմին հարցեր տալու և պատասխաններ ստանալու համար:Հարց ու պատասխանի փուլը ամբողջությամբ տևում է 10 րոպե:

Բանավեճի ժամանակ խմբավարի հիմնական առաքելությունը աշակերտների հարգալից վերաբերմունքի կանոնների պահպանման ապահովուն է:

Ամփոփում-15 րոպե

Բանավեճի ավարտին քննարկման միջոցով կատարվում է ամփոփում,ինչպես նաև բացթողումների հավելում խմբավարի կողմից:

Հարցադրում 1.Ինչու են մարդիկ մասնագիտություն ձեռք բերում:

Կհնչեն տարբեր պատասխաններ.

● Որպիսի գումար վաստակեն…

● Որպիսի պիտանի մարդ դառնան…

● Որպիսի զբաղվեն սիրելի աշխատանքով…

● Որպիսի ճանաչված լինեն…

Հարցադրում 2.Ինչպես է ազդում մասնագիտության ընտրությունն անձի կայացման և անձնային որակների ձևավորման վրա:

Պատասխաններն ամփոփլուց հետո բերել մի քանի օրինակ, թե ինչպես է մասնագիտությունը բնավորություն կերտում և որոշակի որակներ զարգացնում: Օրինակ՝ բժիշկներին հատուկ է հոգատարությունը, գյուղատնտեսներին՝ սերը բնության նկատմամբ, հոգեբաններին համբերատարությունը, խմբգիրներին՝կենտրոնացված ուշադրությունը և այլն: Այսինքն՝ մասնագիտություն ընտրելիս մենք նաև ընտրում ենք ով

դառնալը՝հոգատար,օգնող, գործնական ,համբերատար,նախաձեռնող և այլն: Ուրեմն ինչո՞ւ է կարևոր մասնագիտության ճիշտ ընտրությունը. Որպիսի դառնանք այն, ինչ կանք և մեզ երջանիկ ու բավարարված զգանք:

Թեստ

Մասնագիտական գործունեության նախընտրելի տեսակները

Թեստն ուղղված է մասնագիտության ընտրության գործընթացում անձի ուղղվածության բացահայտմանը: Այցելուն պետք է առաջարկվող քսան զույգ գործունեության տեսակներից ընտրի մեկը և նախընտրած տարբերակը վերցնի շրջանակի մեջ:

Թեստավորման ժամանակահատվածը չպետք է սահմանափակված լինի, սակայն կարելի է նշել, որ հարցերի շուրջ պետք չէ երկար մտածել և թեստավորումը միջինում պահանջում է 20 րոպե: Թեստի արդյունքների վերլուծության աղյուսակը ևս պատրաստված է, հինգ տողերից յուրաքանչյուրը համապատասխանում է Ա. Կլիմովի կողմից առանձնացված մասնագիտական գործունեության նախընտրելի տեսակներից մեկին և ցանկալի է այցելուին առաջարկել հենց այդ տիպին պատկանող մասնագիտություն:

Թեստի հրահանգ

«Ենթադրենք, որ համապատասխան ուսուցումից հետո դուք կարող եք կատարել ցանկացած աշխատանք: Բայց եթե ստիպված լինեիք ընտրել միայն հնարավոր երկու տարբերակներից մեկը, ո՞րը կլիներ»:

1ա. Խնամել կենդանիներին	թե՞	1բ. Սպասարկել մեքենաներ, սարքեր/ հսկել, կարգավորել դրանք
2ա. Օգնել հիվանդ մարդկանց, բուժել նրանց	թե՞	2բ. Կազմել աղյուսակներ, հաշվիչ մեքենաների ծրագրեր
3ա. Հսկել գրքերի նկարազարդումների, պլակատների, գեղարվեստական բացիկների, ձայնապնակների որակը	թե՞	3բ. Հսկել բույսերի վիճակը, զարգացումը
4ա. Մշակել նյութեր (փայտ, գործվածք, մետաղ, պլաստմաս և այլն)	թե՞	4բ. Ապրանքը հասցնել սպառողին (գովազդել, վաճառել)
5ա. Քննարկել գիտահանրամատչելի գրքեր, հոդվածներ	թե՞	5բ. Քննարկել գեղարվեստական գրքեր (պիեսներ, համերգներ)
6ա. Մեծացնել տնային կենդանիների	թե՞	6բ. Մարզել ընկերներին (կամ կրտսերներին) որոշակի գործողություններ կատարելիս

7ա. Արտատպել նկարներ, պատկերներ կամ լարել երաժշտական գործիքներ	թե՞	7բ. Ղեկավարել որևէ բեռնատար (ամբարձիչ կամ տրանսպորտային) միջոց
8ա. Մարդկանց հաղորդել, բացատրել անհրաժեշտ տեղեկությունը	թե՞	8բ. Գեղարվեստորեն ձևավորել ցուցահանդեսներ, ցուցափեղկեր կամ մասնակցել համերգների, բեմադրությունների կազմակերպմանը
9ա. Վերանորոգել ապրանքներ, հագուստ, տեխնիկա, բնակարաններ	թե՞	9բ. Գտնել և ուղղել տեքստերում, աղյուսակներում առկա սխալները
10ա. Բուժել կենդանիներին	թե՞	10բ. Կատարել հաշվումներ, հաշվարկներ
11ա. Աճեցնել (ստանալ) բույսերի նոր տեսակներ	թե՞	11բ. Նախագծել արդյունաբերական արտադրանքների նոր տեսակներ (մեքենաներ, սնունդ, տներ և այլն)
12ա. Լուծել մարդկանց միջև առաջացած վեճերը, գժտությունները, համոզել, բացատրել, խրախուսել, պատժել նրանց	թե՞	12բ. Հասկանալ գծագրեր, սխեմաներ, աղյուսակներ (ստուգել, ճշտել, հստակեցնել)
13ա. Դիտել, ուսումնասիրել գեղարվեստական ինքնագործունեության խմբակների աշխատանքներ	թե՞	13բ. Դիտել, ուսումնասիրել մանրէների կյանքը

14ա. Սպասարկել, կարգավորել բժշկական սարքավորումներ	թե՞	14բ. Բժշկական օգնություն ցույց տալ մարդկանց վնասվածքների, հարվածների, այրվածքների և այլնի դեպքում
15ա. Կազմել ճշգրիտ բացատրություններ, հաշվետվություններ դիտարկվող երևույթների իրադարձությունների, չափվող օբյեկտների և այլնի մասին	թե՞	15բ. Գեղարվեստորեն նկարագրել, պատկերել իրադարձությունները
16ա. Լաբորատոր անալիզներ կատարել հիվանդանոցում	թե՞	16բ. Ընդունել, զննել հիվանդներին, զրուցել նրանց հետ, բուժում նշանակել
17ա. Ներկել կամ նկարազարդել սենյակների պատերը, իրերի մակերեսները	թե՞	17բ. Իրականացնել շենքերի մոնտաժում կամ մեքենաների, սարքերի հավաքում
18ա. Կազմակերպել ընկերների կամ կրտսերների էքսկուրսիաները, արշավները, այցելությունները թանգարաններ, թատրոններ և այլն	թե՞	18բ. Խաղալ բեմում, մասնակցել համերգների
19ա. Օգտվելով գծագրերից պատրաստել դետալներ, ապրանքներ, կառուցել շենքեր	թե՞	19բ. Զբաղվել գծագրությամբ, պատճենահանել գծագրեր, քարտեզներ

20ա. Պայքարել բույսերի թե՞ հիվանդությունների, անտառի և այգու վնասատուների դեմ	20բ. Աշխատել ստեղնաշարային մեքենաների վրա

Արդյունքների վերլուծություն

Անձնային տիպ	Մարդ-բնություն	Մարդ-տեխնիկա	Մարդ-մարդ	Մարդ-նշանային համակարգ	Մարդ-գեղարվեստական կերպար
Նշեք թեստում ընդգծված հարբերակների համարները	ա	բ	ա	բ	ա
	բ	ա	բ	գ	բ
	գ	բ	բ	բ	գ
	դա	գ	գ	դբ	բ

	ա	Բ	ա	Բ	ա
	Բ	ա	Բ	ա	Բ
	ա	Բ	Բ	Բ	ա
	ա	ա	ա	Բ	Բ
դամենը					

Տարբերում են մարդկային տիպերի և մասնագիտությունների 5 համադրություններ՝

1. մարդ-մարդ
2. մարդ- բնություն
3. մարդ- տեխնիկա
4. մարդ- ստեղծագործական կերպար
5. մարդ- նշանային համակարգ

1. Մարդ - մարդ տեսակը՝ ենթադրում է հիմնականում աշխատանք մարդկանց հետ և մասնագիտական աշխատանքից բխող մշտական շփումներ: Այս տիպի մասնագետները պետք է կարողանան գործնական հարաբերություններ հաստատել մարդկանց հետ և պահպանել այն, հասկանալ նրանց, ազդեցություն գործել մարդկանց վրա՝ ցուցաբերելով համբերատարություն, բարյացկամություն, մեծահոգություն: Այսպիսի մասնագետների համար մշտապես պետք է հաճելի լինի շփումը մարդկանց հետ:

2. Մարդ - բնություն տեսակը՝ ենթադրում է աշխատանք, որը կապված է բնության երևույթների և օրգանիզմների հետ: Այսպիսի մասնագետները հոգ են տանում բուսականության և կենդանիների մասին և կատարում են մի շարք աշխատանքներ, որոնք կապված են դրանց խնամքի, զարգացման ու բազմացման հետ: Այս մասնագետների աշխատանքի օբյեկտ են հանդիսանում կենդանիները, բուսականությունը, միկրոօրգանիզմները: Նրանց անհրաժեշտ է համբերատարություն անհարմարավետ պայմաններում աշխատելու համար:
3. Մարդ - տեխնիկա տեսակը՝ ենթադրում է այնպիսի աշխատանք, որն առնչվում է տարատեսակ մեքենաների, մեխանիզմների, սարքերի հետ: Այսպիսի մասնագիտությունները կապված են տեխնիկական միջոցների ստեղծման, մոնտաժման, հավաքման, փորձարկման, շահագործման հետ:
4. Մարդ– գեղարվեստական կերպարի գործունեությունն անվանում են ստեղծագործություն: Այն համարվում է մտքի, ճանաչողական, հոգևոր և պրակտիկ գործունեության արդյունք: Մասնագետներին անհրաժեշտ է գեղարվեստական ճաշակ, վառ երևակայություն:
5. Մարդ- նշանային համակարգ կերպարն առանձնանում է իր թվերի, նիշային պատկերումների, կոդերի, սիմվոլների, տեքստերի արտահայտմամբ: Այս տիպին են դասվում այն մասնագիտությունները, որոնք ենթադրում են աշխատանք թվերի,

բանաձևերի,աղյուսակների,գծագրերի,դրանց ստեղծման,հետազոտության և կիրառման հետ:

ՈՒՍՈՒՑԻՉԻ ԴԵՐԸ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄՈՒՄ

Կրթական համակարգում ապագա մասնագետների կայացման համար կարևոր դեր են խաղում մասնագիտության մեջ ինքնորոշումը, մասնագետների և աշխատաշուկայի պահանջարկի համապատասխանությունը, ինչին հնարավոր է հասնել հոգեբանամանկավարժական աջակցմամբ և ուղղորդմամբ: Եթե մինչ այժմ ուսումնառության մեջ մեզ հասած ժառանգությունը իմաստավորվել է մասնագիտական կողմնորոշման ճանապարհով, այն եղել է արդարացված, քանզի ապագա մասնագետները աշխատանքի են ուղղորդվել ըստ ստացված որակավորման: Փոփոխվող հասարակության պայմաններում այն չունի արդյունավետություն, քանի որ ապագա մասնագետները (դեռահասներ, պատանիներ, երիտասարդներ) կրթությունը ստանալուց հետո աշխատանքի ընտրությունը կատարում են ինքնուրույն կողմնորոշվելով, ելնելով պահանջարկից: Այսինքն, այսօր առավել կարևոր է ապագա մասնագիտության համար ինքնորոշումը սեփական անձի հնարավորությունների և կարողությունների գիտակցման ճանապարհով, ոչ թե մասնագիտական կողմնորոշում՝ դրանց գնահատման միջոցով: Այս առումով կարևորում ենք հոգեբանական աջակցումն ու խթանումը ավելի վաղ՝ դեռահասության տարիքում, ինչը հնարավոր է իրականացնել համապատասխան տեղեկատվության լայնածավալ կիրառմամբ և դեռահասների շրջանում հոգեբանական ինքնաճանաչման, ինքնագիտակցման ձևավորման և զարգացման ճանապարհով: Սովորողի մասնագիտական ինքնորոշմանը կարելի է մոտենալ որոշակի հիերարխիայով. մանկական տարիքի խաղային գործունեության առանձնահատկություններից՝ թե ուր են ուղղված եղել հետաքրքրությունները (ինչպիսի դերեր, հերոսներ, կերպարներ և այլ), մինչև հասուն տարիքում՝ ընդունակություններով պայմանավորված՝ մասնագիտության ընտրություն և իրացում: Հիերարխիայի յուրաքանչյուր շերտ «պատասխանատու է» տարիքային այս կամ այն փուլի համար: Այսպես. դեռահասի պատկերացումներն ու երազանքները որոշակի համակրանք, կամ նույնիսկ հրապուրաքն են ձևավորում կոնկրետ մասնագիտության հանդեպ, իսկ արդեն պատանեկան տարիքում դրանք նախահիմք են դառնում արժեհամակարգի համար: Ապագա մասնագետը կա-յացնում է իր որոշումը, ընտրում է մասնագիտությունն ու ծավալում սկզբում ուսումնական, այնուհետև մասնագիտական գործունեությունը: Հանրակրթական հաստատություններն այսօր նոր պահանջներ են առաջացնում ապագա երիտասարդների համար: Դրանցից ամենակարևորներից է մասնագիտական կոմպետենտության, որպես իրազեկվածության, ապահովումը: Ավագ դպրոցականների և երիտասարդների մոտ մասնագիտական կոմպետենտությունը կարող է նպաստել ապագա մասնագիտության ընտրության հնարավորությունների ընդլայնմանը,

արդյունավետ ինքնորոշմանը: Մասնագիտական ինքնորոշումը ապահովում է որոշակի պատրաստվածություն ապագա մասնագիտության ընտրության համար: Ելնելով այն հանգամանքից, որ կրթական հաստատությունը պետք է ապահովի ոչ միայն գիտելիքներով, այլև այս կամ այն երևույթի մասին գործնականում ինքնուրույն վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու փորձառությամբ, անհրաժեշտ է ուսումնառության ընթացքում հաշվի առնել սովորողների՝ որպես ապագա մասնագետների, կոմպետենցիաների ձևավորման գործընթացը ևս: Կոմպետենցիաները, որպես անձի գիտելիքների, կարողությունների, հմտությունների, գործունեության ձևերի փոխկապակցված համախումբ, ձևավորվում են ուսումնական գործընթացներում, տարբեր առարկաների տիրապետման շնորհիվ և ծառայում են ապագա արդյունավետ գործունեության իրականացմանը: Համապատասխան կոմպետենցիաներին տիրապետելը և գործունեության հանդեպ ձևավորված հստակ պատկերացումներն ու վերաբերմունքը ապահովում են մասնագիտական կոմպետենտությունը երիտասարդ տարիքում:

Եզրակացություն

Կատարելով մի շարք ուսումնասիրություններ և աշակերտներին թեստեր և զրույց -բանավեճերի օգնությամբ հանգեցի հետևյալ եզրակացության, որ ժամանակակից դպրոցի աշխատանքի հիմնական ուղղությունը, ապագա ուսանողներին օգնելն է իրենց ապագա մասնագիտության ընտրության հարցում ինքնորոշման հարցում,ինչը կարող է իրականացվել աշակերտների
հոգեբանական և մանկավարժական աջակցության միջոցով: Այս ուղղությամբ հիմնական դերը վերապահված է ուսուցչին՝ կրթության և դաստիարակության գործընթացում յուրաքանչյուր աշակերտի կարողությունները բացահայտելու, բարձր տեխնոլոգիաների մեջ կյանքին պատրաստ մարդու պարկեշտությունն ու հայրենասիրությունը դաստիարակելու համար, մրցակցային աշխարհ. Իսկ դպրոցական կրթությունը պետք է կառուցվի այնպես, որ շրջանավարտները կարողանան ինքնուրույն դնել և հասնել լուրջ նպատակների, հմտորեն արձագանքել կյանքի տարբեր իրավիճակներին:

Գրականություն

1.Մասնագիտական կողմնորոշման նյութերի ժողովածու ուսուցիչների համար

(8- 12դասարաններ)

2. Ակիմովա Մ.Կ. , Կոզլովա Վ.Տ. Դպրոցականների անհատականության հոգեֆիզիոլոգիա կան առանձնահատկությունները.

3. Մ.Կ., Կոզլովա Վ.Տ. Դպրոցականների անհատականության հոգեֆիզիոլոգիական առանձնահատկությունները. Հաշվառում և ուղղում. - Մ.: «Ակադեմիա» հրատարակչական կենտրոն, 2002 թ